

Բարձրագույն, 2. Կ.


491.99-4

Յ Ա Ղ Ա Գ Ս    Հ Ն Չ Մ Ա Ն

•    Լ    Ե    Ղ

Տ Ե Ռ Ի Յ Մ Ե Ր Ո Յ

Կրկնակի  
838



1852

Ն Ա Լ Է Ր

Լիգայոնի Գալուստ Կիւլպէնկեան

Հիմնարկութեան կողմէ

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների

Ակադեմիայի Մատենադարանին

1966

222  
100/100/100

# Յ Ա Ղ Ա Գ Ս    Հ Ն Չ Մ Ա Ն

Լ Ե Ի Ղ

Տ Ա Ռ Ի Յ    Մ Ե Ր Ո Յ



ԼՄԵՆԱՅՆ ազգ որդի 'ի հօրէ բերանոյ 'ի բերան աւանդութեամբ ուսանի զհնչումն բարբառոյ իւրոյ . բայց յանցանել բազմադարեան ժամանակաց առ սակաւ սակաւ մարթի յանզգաստից մտանել փոփոխութեան և օտարոտի աղաւաղութեան . որպէս և եղեալ իսկ է ամենեցուն վկայութեամբ 'ի լեզուս լեզուս յայլ և այլ պատճառաց . և քերթողաց պարտ է հսկել և յուղղութիւն գործուցանել : Այս անցք թուի անցեալ և ընդ տառս մեր Լ և Ղ . թուի ասեմք առ այժմ, մինչև քննութեամբ ցուցցուք զիւրայն հաւաստիս, զի չեն կարծիք և թուիք միայն, այլ արդեամբք սարդեալ խանգարումն . և զգեղ գարմանոյն մատուցուք 'ի բուն 'ի հին լեզուազէս նախնեացն օրինաց :

Ոչ ուրուք յարդի դարուցս քերականաց 'ի քնին մտեալ վասն իրացս, և ոչ մեր ընթերցեալ ինչ էր ուրեք՝ ոչ միայն կանոնս ինչ, այլ և ոչ գոնէ փոքր մի երկրայութիւն առ 'ի զարթնուլ : Բայց յերեսուն և աւելի աւմաց հեռէ նկատեալ զի ոչ սակաւ բառք լեզուիս և անուանք երբայսկանք, հելլէնք և լատինք դատիւ դրեալք 'ի հին գրչագիրս, իսկ 'ի բերան ապրին բառքս մեր առ հասարակ և յօտար անուանց յուղապոյնք լինելու ասին, ծագեցան տարակուսանք 'ի միաս դատիցն այնոցիկ լին լինելոյ : Յոր առաւել հաւանեցուցանէին զմեզ սյաղագայի անուանցն զըրութիւն և հնչումն, առ որս չիք բնաւ դատ ասա . և զպարզ լինն նոցա, զտառն ասեմ լեզուածայր, որ մանաւանդ լերկ և փափուկ իսկ է առ նոսա քան առ մեզ՝ որպէս տեսցուք յառաջիկայդ, զայն 'ի կոկորդախօս դաս փոխել յոյժ անսեղի թուէր յաչս մեր և օտար յամենայն լեզուաց օրինաց և մերոյ իսկ նախնեացն տառադարձութեան : 'ի լուծումն այսր տարակուսանաց հարկ եղև և է իսկ այժմ միտլ 'ի խորս քննութեան կարևոր ինդրոյս, և ցուցանել զայն անժխտելի փաստիւք, որպէս զհարդ և մարթի յայսպիսիս լինել ընծայութիւն :

Եւ զի 'ի հնարոյն նախնեացն աւանդից արժան է սկսանել զայդր բնն նութիւն, անուամբ նախ 'ի ձեռս զհին քերականն նախնեաց, տեսանել թէ տայցէ ինչ լոյս : Եւ գտանեմք Նախ, զի լ մեր ընդ թաւ և ստուար և յյր տառան կարգի, զ ընդ միջակն : Երկրորդ, զի լ որ յամենայն լեզուս ընդ նայս կամ լերկս դասեալ է, չգտանի անդ ընդ նայն, այլ փոխանակ նորս և չին Յունաց կազ զ թուեալ ընդ միւս նայն մ, ն, ր : Այս հարկաւ գառաջինն զարմանս իմն բերէ . բայց աղէ յառաջ տարրուք գգրն .

նութիւնս , և ահա տեսանեմք երրորդ , զի թաւ տառն և ընդ կրկնական դասեալ է անդ , և ասի իսկ յերկուց ձայնակցաց բաղկացեալ , և իմանի յերկուց բարակ և նուրբ և լերկ լինից կամ նայ ասացեալ զից :

Ամենայն անաչառ լսողի հարկ է աստանոր զայստիկ ածել զմտաւ . նախ՝ թէ լինն մեր ուրեմն թաւ տառ է՝ թանձր և խաժ . զի ոչ միայն ընդ նայան չկայ , այլ ընդ թաւսն , նա և ընդ կրկնական՝ յերկուց նայ լինից կամ զից բաղկացեալ : Երկրորդ , թէ զատ ձայն խաժ և կոկորդային զիւրդ մարթիցէ նայ լինել կամ լերկ , որպէս դնի ընդ նայան , ուր ՚չ հէլլենա- կան , նրբագոյն յոյժ քան զմերն զատ , ոչ երբեք թուի ՚ի Յունաց ընդ նայան : Երրորդ , թէ զիւրդ թաւս լինն բաղկանայցէ յերկուց զից ընդ նայա թուեւոց , է թէ չիցէ սա այլ իմն ձայն մեզ անծանօթ . զի զինչ միա- բանութիւն կամ հաւասարութիւն ընդ կոկորդաձայնն զատ և ընդ լեզուա- ծայր լինն՝ որչափ և թաւ համարիցի :

՚ի հարցափորձէ աստի ՚ի յայտ գայ սրարզաբար տեսութիւն , թէ և միա- տեսակ է , և այն՝ թաւ և կրկնակ , հեռի ամենակն ՚ի լերկէ և ՚ի նայէ : Իսկ զ կրկին երևի . մի՛ կոկորդային և անհամեմատ ամենակն ընդ և , որ- պէս զգայ ամենայն ոք . և միւս՝ նայ կամ լերկ , այնպիսի՛ որ ըստ ակնար- կելոյ նախնեացն՝ կրկինն իւր տայ մեզ զթաւն և Սակնայ որչափ և նրբեացի ձայն զատն , անհնար թուի մտաց և բերանոյ գալ հաւասարել նմա ընդ ձայնի լինին . որ և սա ոչ ուրեք երբեք բնաւ յուսեքէ հնչի զատանման : Ապա տարակոյս մեծ և անլուծանելի , մինչև ուստեք ՚ի յայտ գայցէ թէ զինչ է արդեօք նայ ասացեալն այն զ :

Իսկ զիւրդ իցէ լուծանել զտարակոյսդ : Հին Բերականն այդչափ ևեթ իւրում ժամանակին բուական ասացեալ լուէ : Իսկ հին մեկնիչք նորա , որ աներկբայ ՚ի վերայ կային մտացն և ուղիղ տեսանէին զբրուած տառն , ոչինչ յայտնաբանեն մեզ . և առանց ուրուք նախնեաց առաջնորդութեան չմարթի հաւատաւառ իմանալ զգրեալսն աւելի քան զերկոտասան դար յա- ուջ քան զմեզ :

Յակն արկեալ զամենայն քերականական գրուածս յաջորդ նախնեաց , և ոչինչ գտեալ մինչև ՚ի սկիզբն երեքտասան դարին , որ ՚ի միջին զարուց համարի է գրականութեան մերոյ , անդ գտանեմք զԱրիստակէս Գրիչ բա- նիբուն և զԵրզնկացի . որոց անգոստին յերեսանց ժամանակէն տեսեալ բա- խանգարումն տառիցք ՚ի բերանս առմկին , յարուեստի գրչութեան լե- զուիս և ՚ի մեկնութեան հին Բերականին այսպէս աւանդեն յայտնապէս , թէ զ և և կրկին հնչումն ունին ՚ի մեզ . զ՝ առանձինն թանձր զատ , մտ ՚ի ի կամ ՚չ Յունաց , որպէս ՚ի բառսն աղ , հող . և՛ նոյնպէս առանձինն թանձր լինն , որպէս ՚ի լալ , լաւ . և միւս ևս երկրորդ հնչումն անօր և լերկ՝ հասարակ երկոցուն անուիցդ , զոր և կոչեն իսկ կէս լինն կամ նուրբ և նայ լինն : Չոր առ ՚ի յայտ առնել , ասեն , անդոստին յաւուրայ անոխ թարգմանչացն և եղին փիլիկ ինչ՝ ՚ի նշանագիրն յայն ( և կամ զ , չէ փոյժ այժմ՝ առ տեղեաւս ) , և անուանեցին զլինն կամ լինն , նուրբ և փափուկ արտա- բերել և . զի և լծորդ իսկ է , ասեն , զասն լիննին , որպէս և ձևովն նման՝ կէտ աւրնթեր ունելով ՚լ :

Բայց որպէս յայտի իմանամք ՚ի սովորութենէ ընախր հին գրչաց , և ՚ի բանից անտի Արիստակէայ և Երզնկացոյն , յետ ժամանակաց տեսեալ գրչաց թէ գիրն զ է , կամ առ ընթեր կիտիւն ՚լ լինն ՚ի զատ նմանեալ է , իսկ տառն կամ ձայնն , որպէս և անուան իսկ յայտ առնէ և որպէս ին- քեանք իսկ հնչէին , է լինն , թէ և կէս և բարակ , առ ՚ի բառնալ զտա- նաութիւն զ ձևոյն՝ սկսեալ են ՚ի բազում բառս և անուանս , մանաւանդ յառաւել ծանօթս և սովորականս փոխանակել ընդ նորա զլինն , բառնա- լով զաւրնթեր կէտն և զնելով ՚ի վերայ զփիլիկն նշան լերկութեանն և : Եւ արդեամբք իսկ երևին յաճախ առ լաւ գրիչս մի և նոյն բառք և անուանք մերթ զմեզ գրեալք և մերթ լիւ , կամ առ ուսմնն զլիւ՝ առ միւսումն լիւ :



Եւ թէ ուրեք պահապնիցի փշիկն, մտազման կամ անհոգութեան վրիպակ է, որպէս յայտնի տեսանի զի մերթ զնէն, մերթ մտանան կամ զանց առնեն 'ի նոյն անուանս :

Չայն սովորութիւն տեսեալ և Արիտասկեայ մինչև յաւուրս իւր, և նոր կատեալ ևս՝ զի զփոխանակեալ լիւնն իսկ անդէտք թանձր լիւն հնէլին, ասէ. “ Եւ միւս նշանն որպէս փշիկ է, և է 'ի վերայ այնց գրից, որոյ գտնին որպէս դասի է, և չէ դատ, և ոչ լիւն՝ որ 'ի համարողականն զբռններորդ թիւն ունի. այլ զիւն է սա, որ 'ի դասինացն անուանի և 'ի Եղիէ էղին և 'ի դամա և յաղէ՛ցուխայս և 'ի Կաթանայիցն և յարայիցն և որ այլ սոցին նմանս, ուղղակի և նուրբ բերէ : Սի որք որպէս զգատ զնա խօսեցնեն, այն աւեր է և շաղիագրի. և որք որպէս զլիւն խօսեցնեն, այն թանձր է և անյարմար : Իսկ այս զիւն է սրուկ և նուրբ բան զլիւն՝ որպէս զօրինակդ ցուցի, և ոչ դասին պէս որ ամենեկն անիկբան է և անհեթեթ : Եւ զլին յաւուրս. “ Իսկ զի զասի գլուխ է սահմանած, զի լծակից է լիւնի. և յայլ ազգաց լեզուս նոր է լիւնն. և զոր մէք զատով Գուհաս, Գաղար ասեմք, նոքա '՛ Գուհաս, Գաղար. այսպէս և զայլն նրմանապէս : (իմա զայլն՝ զորս ազգն զատիւ ասեր) :

Յետ նորս Երզնկացին այսպէս գրէ. “ Ի բառս խօսից լիւնն յայտնի է 'ի բազում իրս. բայց զամն երկու գրոյ սեղի ընու. մին զիւրն, և մին զլիւննի : Եւ է լիւնն թանձր, և զիւնն նոսր 'ի ձայնս. զի լիւնով յորժամ ասես լաւ, լար, լոյս, ուղիղ է. և զիւնով անհամ երեկ : Իսկ զիւնի բառ՝ դամբար, զատինացի կամ զակնացի, էղիէ էղի. որք խանդարին 'ի լիւնով ասեն էղի էղի. քանզի էղի էղի՝ աստուած իմ աստուած իմ լին. իսկ էղի էղի՝ այլ իմն ասէ, թէ Ելի 'ի հօրէ և եկի յաշխարհ. կամ՝ է լի, չէ թէրի. և լիւնիւ ասել լալ՝ զուգ ցուցանէ. իսկ զիւնիւ դալ՝ զանուան մարդի և կամ զպատուական ակնէ յայտ առնէ. քանզի զիւնն կէս լիւնի է ըստ ձայննի : Եւ զի են սորս ձայնակից և մի. են և որիչք, որիչ ըստ թուոյն, զի լիւնն երեսուն է 'ի թիւս, և զասն որ է զիւն՝ իննսուն : Իսկ ձայնակից, զի զոր մէք ասեմք Գուհաս, Գաղար, 'ի յուշին՝ '՛ Գուհաս, '՛ Գաղար : ”

Յետ սոցա և Եսայի նշեցի զնոյն վարդապետեալ, թէրես յայտնագոյնն և ասէ թէ : Ի լիւնէ զիւն ելանէ. և է լիւնն թանձր, և զիւն նոսր 'ի ձայնատու թիւն : ”

Եւ զի 'ի վարդապետութենէ աստի նախնեաց ոչ կրկին բարակ ձայնք իմանին, մի բարակ դատ և միւս բարակ լիւն, այլ մի ձայն լերկ լիւնի երկոցուն նշանագրացն զ և լ, անտի յայտ է մտաւորաբար ընթերցողի, զի նախ 'ի հին Քերականին չեք նայ կամ լերկ լիւն յայտնապէս աւանդեալ լիւն անուամբ. այլ լերկ զ միայն, և այն ընդ նայն եղեալ, որոյ կրկինն սոյ զլծաւ լիւն. որ և է հինն խնդրոյս : Երկրորդ, զի բարակ դատ չեք ուրեք յիշատակեալ դատ անուամբ, որպէս պարսն էր լինել էթէ գոյր բարակ դատ հնչումն. այլ դատ, որպէս ասեաք, ընդ միջակնն և ընդ կրկնական դատ ասեալ կայ : Երրորդ, զի մի և թ անուն ընծայի զ և լ տառիցն, և այն զիւն, կամ լիւն որ յայտնապէս է անուն լիւն տառին նրբելոյ, կրրկին գրով գրեալ, ըստ որում զկրկին գրոյն նմանութիւն բերէր նախնականն այն նշանագիր՝ կէտ առ ընթեր ունելով : Չորրորդ, զի ոչ բազմաբար ասէ Արիտասկէս, “ Էն դատ և ոչ լիւն : ” և զլինի “ որ ընտա խօսեցնեն : ” այլ միաբար թէ “ Էն դատ և ոչ լիւն. որք որպէս դատ ընտա խօսեցնեն : ” որով յայտ է թէ զլի և նոյն տառի հնչմանէն է բանն, գրելոյ զ կամ լ : Հինգերորդ, զի դատ հնչելն աւեր և արգիւտ, անիւրդ և անէլեի ասի. որ է ասել ամենեկն այլ ընդ այլոյ և օտար : այլ դատ հնչումն ոչ բողբոլին այլ ընդ այլոյ և օտար համարելի էր 'ի բարակ դատին : Իսկ լիւն հնչելն ասի միայն լեւից և անարժար. որով իմանի՝ ոչ բնական օտարտի ձայն, այլ նման, բայց թանձր, և թանձրութեամբն անյարմար միայն : Վեցերորդ, զի յայտնապէս ասէ Երզնկացին, թէ զատն երկու գրոյ սեղի

ընու . մին զիւրն և մին զզիննի . և է լիւնն թանձր , և զիւնն նօսր , և այն . որ յայտնապէս զմի և նոյն լ տառի հնչմանէն իմանի . մին թանձր՝ զոր գրէ լիւն , և միւսն լերկ և նայ՝ զոր գրէ զիւն . որպէս և յառաջ բերեալ օրինակք նորա վկայէն հաւասար , որպէս և այն թէ զիւնով ասացեալ թանձր լիւնն՝ անհամ երևի . որ է ստել գարձեալ՝ ոչ օտար , որպիսի է զ ձայնն , այլ անսխորժ ծեքումն ևեթ , զոր և յայտնագոյնս հաւաստէ նչեցոյն ասելն թէ 'ի լիւնն զիւն ելանէ : Եւ եօթներորդ Վճռական ապացոյց և կնիք հաստատութեան , զի զնօսր լիւնի հնչումն այլոց ազգաց կամեցեալ յայտ առնել , գրեն նոյնպէս Ղուկաս , Ղազար . և զի Երզնէ կացին զլայն այլազգական առեալ յօրինակ՝ գրէ զնայ՝ որ յայտնի ցուցանէ թէ ուրեմն զ՝ և չ զնոյն ձայն ունին : Զի ոչ այլ ազգք բարակ զատիւ ասեն երբեք Ղուկաս , Ղազար , այլ Ղուկաս , Ղազար , և ոչ երբեք բարակ զատիւ զազ ասի ձայնն այն այլազգացի , այլ լերկ և նայ լիւնիւ լայլ , որպէս հնչի յայտօր առ պարսիկս և արաբացիս և ուսձիկս և առ ամենայն արևելայս :

Արդ 'ի վարդապետութենէ այտի նախնեաց հաւաստեալ , որպէս կարծեմ անժխտել , թէ զ կրկին էր առ մեզ 'ի հնուսն , մին զատ , և միւսն զիւն , և թէ այս զիւն՝ էր լիւն բարակ կամ լերկ , ահա այժմ յայտնի տեսանի ամենայն բանաւոր մտաց՝ թէ զինչ էր նայ կամ լերկ զ ասացեալն հին Քերականին , և թէ որպէս թաւ լիւնն բաղկանայցէ յերկուց նայ իցի , այս կնիքն զիւնից կամ լիւնից . որ գիպուորն է և մտն բնութեան ձայնիցք և գործարանի արասերութեան : Զի երկոքն են լերկածայր տասք՝ առաւելութեամբ և նուազութեամբ ևեթ զանազանեալք . զի թանձր լիւնն ձևանայ ոչ յոյժ տափելով զլեզուն , և ուժգին բախելով զմեծ մասն ծայրին ընդ քիմնս . իսկ լերկն՝ առաւել տափելով և միայն զծայրն զիպուցանելով 'ի քիմնս : Իսկ 'ի տեղոյ ձևացման զատին , 'ի կոկորդէն ասեմ , ցրծայր լեզուին , ասարեկզ մի 'ի միջի կայ . և անհնարին է միարանել նոցա 'ի մի հնչումն :

Ապա ըստ այսմ խորութեան՝ այն ամենայն բառք լեզուիս որ 'ի հնուսն զիւնիւ գրեալք և ապա 'ի լիւնն փոխեալք են 'ի գիր կամ 'ի խօսս ազգին , զիւնիւ կամ որ նոյն է լերկ լիւնիւ են արասերելի : Եւ այսպիսի դատնեմք ոչ սակաւ բառս . օրինակ իմն այլ ( շաղկապ ) ( 1 ) , և ամենայն 'ի ոչ յանգեալքն , որպէս Թոյլ , ծոյլ , գոյլ , նշոյլ , գեյլ , գիլ , ջլլ , գուլ , զլլ , դահլիճ , թալուկ , թալկանալ , լուղակ , լուղակ , լուղակ , լուղակ , լուսամ , մառախլապատ , յեյլուգակ , ուլունք սպակեայ , մարդեկոյլ , ամուլ , ուլ , մալուխ , լուսայ , շափիլայ , թլիստ , և այլն , որք և առ հասարակ գրտանին զիւնիւ և լիւնիւ գրեալք 'ի հին գրչագիրս , որպէս քննութեամբ ստուգեալս է : Այս է զոր ասէ Արիստակէս Գրիչ , թէ « Ղիւնս յուրովինչ և 'ի մերս մասան լեզու , որպէս զիւրի , զուղակ , զուսուլ , զեղ որ է շալիլ , այլ վասն առերկ , սա շաղկապ է . իսկ այն՝ որ այլ զեմք ցուցանէ , որպէս այն՝ թէ այլ որ եկեցէ յիւր անուն , անդ լիւն թանձր պիտոյ է » . և այլն : Ուր գիտեա գարձեալ զայտնի ցոյցս վկայութեան մի և նոյն ձայն լինելոյ զ՝ և չ նշանագրայն :

Հաստատեալ զգոյութիւն լերկ լիւնին 'ի մեզ , եկեացուք յայլազգի առ նուսնս երբայական , հելլէնոս և լատինոս , զորոց լ տառն թարգմանեն 'ի մեզ նախնիք զ կամ 'լ . 'ի կարի հիննն զ՝ , որ ապա ըստ բազում մասին ,

( 1 ) Թեպէտ 'ի հին գրչագիրս , մանաւանդ երկաթագիրս , երևի ուրեք ուրեք և զու ածականն գրեալ այլ , բայց ոչ հասարակաց է սովորութիւն և ոչ զգուշաւոր գրչաց . զի առ սոսս նշանագրօք կամ փչկան որովն երկոքն այլանիչ բառք , որպէս անշուշտ և 'ի հնամանն զանազանէին :

որպէս ասացար, յապագայ գրչաց փոխեալ են 'ի չ. որում չմարթի լինել այլ պատճառ, բայց զի ձայնն էր լ, և լերկ չ, համեմատ տառի աղջացյն այնոցիկ, որպէս ասացաւ 'ի վերջ :

Այլ նախ քննելի է մեզ, թէ առ երեսնի աղգագ գուցէ արդեօք տառն զատ կոկորդային, որպէս առ մեզ, առ արաբացիս և Պարսո . և հանդէպ որոյ տառի նոցա եղեալ է 'ի մեզ զ, չ : Երբայեցին և լատինն չունին բնաւ զայդ տառ, այլ միայն չ, որում համեմատեալ են 'ի մեզ զ, չ : Յոյնն ունի ՚ ՚ մեղով զատ . բայց ոչ զայդ տառ Յունաց նախնիքն մեր դարձուցանեն 'ի մեզ զ, և չ, այլ զ չ չ : Իսկ զ՚ սովորաբար փոխեն ք, երբեմն զատ առանց փոխի . որպէս յանուանան Ալաթոն, Ալաթիաս, Ալիպիս : Որում միտ գնեւի է այժմէն . զի յետոյ պիտոյ լինիցի մեզ և այս : Այսա ուրեմն, որպէս յարդեանց իսկ իրայն յայտ է, զլամէթն երբայեցի, զլամիտս յու- նախան և զէլ լատին յերուն 'ի մերս զ կամ չ : Իսկ այդ տառք երեցունց աղգագր ևս ոչ երբէք ոչ ուրեք հնչին առ նոսա զատ կոկորդային և ոչ զատ բարակ, նա' և ոչ իսկ լին թանձր, այլ միշտ և միայն լին լերկ և նայ, որպէս յայտնի է ամենայն լեզուագիտաց, և որպէս տուգեցեալ կըր- կին միւսանգամ վասն ինդորոյ մտտուցեալ առ գրագետս և բն- թեւոյցոս նոցին . որք և առ հասարակ յուրաստ կան 'ի թաւ լինեն և ըս- բարոսական զայն սակն : Եւ զնոյն լերկ հնչումն 'ի իստս իսկ նոցա մինչև 'ի յետին սովինն ևս նկատեցար : Որպէս և խտուայեքք, որիք հին հռով- մայեցուց, մինչև յայտար թէ 'ի լատինն և թէ յիտալականն լերկ հնչեն զամենայն լ տառ նոցանց : Այսա մերն նախնիք զլերկ լինն բացատրեցին 'ի մեզ զ կամ 'ի նշանագրքն : Եւ յիրաւի, զի որով իրուամիք զտառ զոր- չունին աղգագ' ստեղծանեին 'ի բարբառս նոցա : Եւ ոչ ապաքէն անխա- նութի լինէր և ծարիւր յունին ամենայն աղգաց, և մանաւանդ Հրէին լակ զի այժմուր և Մալայեի իւր' եղեալ են աղէգուհի, Մալալայէր . Յու- նին' Հելլէն, Պալլաս և լալագէ' եղեալ Հելլոն, Պարզաս, Ղալագէ : հռովմայեցւոյն' լատին և լիւիտս եղեալ Ղապին, Ղեղիտ :

Եւ զի հարկ էր նախնեաց 'ի լերկ լինն դարձուցանել զայն տառ աղ- գացն այնոցիկ, ցուցանի յօրինաց իսկ անտի տառագարձութեան նոցա, զոր պահեցին գրեթէ անխել սովորութեամբ 'ի վերայ այլոց տառից և- լեցունց աղգացն : Օրի եթէ, օրինակ իմն, զհելլեականն միայն շատ հաւ- մարեալ 'ի մէջ առնուլ, որ քան զամենայն պիտոյն է մեզ և ընտանի և մարեալ ծանօթ, և հիմն լատինայն և այլոց նոր աղգաց, եթէ նախնիքն մեր 'ի տառագարձութեան հելլէն տառից որչափ հնար էր զնմանադոյն տառ մեր փոխանակեցին նոցա, որպէս հասարակաց միտքս պահանջեն, և որ- պէս ցուցեալ իսկ է այս համասօտիւ և ամենեցուն հուանութեամբ 'ի Բաղամպէսն մեր (1846, էջ 51), եթէ ըստ այդմ օրինաց

β	է	բ,	վ,	ճ	է	թ,	ξ	է	քս,	կս,	τ	է	տ
γ		դ,	ղ,	չ		կ,	π		պ,		φ		փ
δ		դ,		ւ		մ,			ր,	ա,	χ		ք,
ζ		զ,		ն		ն,	σ		ս,	ղ,	ψ		փս, պս

այսքիկ, հարցանեմք, նմանադոյն տառք իցեն հանդէպ միմեանց եղեալք, որչափ մարթի 'ի լեզուէ 'ի լեզու : Եթէ նմանադոյն, որպէս ոչ որ յու- նազէս և հայագէտ երկմտեցէ, և զորոց չէ տեղոյս մի առ մի զանթմար ճշգրտութիւն ցուցանել բանիւ և օրինակք, ապա զիսորդ էր հնար կամ ո՞ր իրաւունք նախնեացս, զի որ զայդ ամենայն բարձայնս ճշգիւ ըստ մարթեղի դարձուցին 'ի մեզ, միայն 'ի տառն չ խտտրել այդչափ 'ի բնու- թեանն տառից և յերանցն օրինաց, և 'ի զատ փոխել 'ի ձայն ամենեկն օտար և կոկորդային, որչափ և նրբեցի : Աւր, որպէս ցուցաւ, կայր յայտ- նապէս և 'ի մեր բառս տառն լերկ լ, որ ամենեկն համեմատն իսկ է չին



Յունաց, որպէս և լամբժ և էլ տառի միւս երկուց արդացն: Չի Յոյնք և լամբիք որոց չիք զաս, զմեր զասն թիւր և աամիկ լտելու թէամբ անհրմ տարաւ 'ի լ թերևս փոխեալ իցեն ուրեք և փոխեցեն, խմանամք. իսկ մեզ որ ունինքս լին լերկ և թաւ՝ զնոցս լերկ լինն հասարակ օրինոք 'ի զաս փոխել՝ չմանամք զհարգ լինիցի և իւ արդարանայցէ: Եւ նոյն նախ նեացս որ, որպէս ասացաք, զի Յունաց 'ի մեր զաս փոխելն յանուանն Աղաթոն, Աղաթիաս, Աղւոյնս, և խ ասէին 'ի զմրուս (σμερυστος), զհարգ էր համր կամ ո՞ր իրաւունք նոյն համարել առ Յոյնս զարդ 'ի տառ ընդ լ, կամ 'ի մեզ նոյնառցանել զերկոցուն օտարառու տառայդ հնչջումն՝ զերկոսն ևս զաս թարգմանելով 'ի մեզ, և զզատ և իս ձայնն զոր ձանաչէին 'ի ՚ տալով և լին նոցա: Ահներև կայ անտեղութիւնն:

Ազա հարկ է ուրեմն խոստովանել, թէ այն ամենայն բառք և անուանք եբրայականք, յոյնք և լամբիք որ դասնին առ մեզ 'ի հնոց զինքս գրեալք և որ յաղարկայ գրչաց փոխեալ են 'ի լինն, որպէս և հնչէ իսկ զայնս ցայտօր արչն, մանաւանդ զառաւել ծանօթան և զյաճախեալն, այն ամենայն լերկ լինիւ հնչելի են. որպէս անէլուսիս, էլի էլի լամա սարաթթամի (1), տալիթա, Աբէլ, Խարայէլ, Գալիլիա, Լարան, Լիբանան, հայուէ, լամբար, գլիին, փիլիսոփայ, Պերիլէս, Թեմիստոկէս, Պոլիս կամ Պոլիս, Հէլէն, լահնուցի, Ապելէս կամ Ապելէս, Արիստաբուլոս, Ոլիմպոս, Ոլիմպիա, լամբն, լէդէոն, պալտան, Պոպլիտ, Խոսիլա, Գալլիա (Եփրեմ. հաս. ք. էջ 259), և այլն և այլն. որք առ հասարակ դասնին զինքս և լինիւ գրեալք 'ի հին ստոյգ ձեռագիրս: Չայս յայտնապէս աւանդէ և Արիստակէս Գրիչ յես վերայգրեալ վարդապետութեանն. « Իսկ զան զին նիցն, ասէ, որ զասի գլխով են, սակաւ մի նշանակէցի յառաջ, և բաւական է խնայողաց. զի նորա յաճախ յեբրայեցի և 'ի յոյն և 'ի զտաին անուանն մտանեն, յորոց լեզուս նոր է զինն, իսկ 'ի մերս թանձր: Գիտես և ասա զի զին կոչէ և գրէ զնոր լինն այլոց արդաց, որ նոյնպէս վկայ լինի զ և լ նշանագրացն նոյն ձայն լինելոյ:

Այլ տակաւին սնդիցի որ թերևս ընդդէմ այսչափ հաւանութեանց, և կարծիցէ թէ նայ զասցեալն հին Քերականին և զինն այլոց քերական նայ, ոչ լերկ լին իցէ, այլ բարակ զաս կոկորդային. որպէս թէ լինել 'ի մեզ կրկին զաս, մի թանձր և կոկորդային, որպէս 'ի բառն ոլք, մալ թանք, ուղտ, հող. և միւս ևս զաս անոր և լերկ և քմաձայն, որպէս 'ի թոյլ, ծոյլ, Աղէքսանդր, Բաղասափ. և 'ի սոսա յետինսդ՝ թէ զինքս գրեալս և թէ լինիւ, փշիկն նշանակիցէ զձայն անոր զտաի: Իսկ լինն՝ մի և եթ իցէ առ մեզ, և այն միշտ լերկ և նայ, և ոչ երբեք թաւ և թանձր:

Կայցէ առ այժմս այս յետին խնդիր լերկութեան լիննին մերոց, և տեսցաք նախ զբարակ զտաին: Արդ այդմ ընդդէմ էլանէ նախ այն, զի ոչ որ յարգէն զանազանութիւն ինչ խմանայ 'ի զասս երկոցուն կարգի յառաջ բերեալ օրինակացք. որպէս հնչէ զմալթամք, այնպէս հնչէ և զԲաղասափ: Երկրորդ, ո՞ր այլ ուրեք կայ և մտայեալ է 'ի խոսս կամ յնթերցմունս այդ երևակայեալ բարակ զաս կոկորդային. ո՞ որ յարգէն զծոյլն, զթոյլն, զՎէքսանն, զփիլիսոփայն հնչէ երբեք ուրեք ծոյլ, թոյլ, թոյլ, Աղէքսան, փիլիսոփայ, կամ զանէլուսիս, զԳալիլիա, զՊոլիս, զլամբն, զԽոսիլա հնչէ երբեք անէլուսիս, Գալիլիա, Պոլիս, զլամբն, Խոսիլա:

Հիմն և սրտաճառք այդր հակառակ կարծեաց՝ թերևս այն համարիցի 'ի, այն, զի զինն ձևովն նմանագոյն է զտաին բան լիննին: — Իսկ զանունն զինչ արասցուք, որ զին կամ լին է ըստ նախնեաց, և ոչ զաս, և զս.

(1) Բայ քաղզէականին և ասորոյն. որ ըստ ուղիղ եբրայականին է էլի էլի լամա տեղութամի. Սարմուս ին. 2:



դարակներն նոցա թէ “ չէ դատ և ոչ լին ” : Անունն առաւել յայտնիչ է անխառն իրաց , թէ ձևն . զինորդ մարթէր ասել՝ չէ դատ , եթէ ստուգիւր զատ էր ձևն և ձայնն թէ և նուրբ : Եւ եթէ ձայնն ստոյգ զատի էր , ընդէր էր ասպագայ գրեաց փոխել զայն 'ի լին : Եւ զիմորդ զէր անմտութիւն , յետ 'ի լին փոխելոյ՝ պահել ևս զփշիկն 'ի վերայ , և կամել զատ հնչել տալ ազգին զլինն իւր : Ո՛չ ասպքէն պարտ և և հարկ նոցա պահել զչև դատին , և միայն զփշիկն զանց չառնել , զի մի թանձր զատ հնչեալի : Վասն որոյ առաւել անտեղի է կարծել , թէ լին անուամբն և չ նշանագրոյն ևս կամելն զբարակ զատ յայտ առնել , և թէ նմին իրի և գին զփշիկն 'ի վերայ : Իսկ ընդէր բնա անուն գրոյն չէ գոնէ զատ կամ լատ այլ զին կամ լին : Իսկ թէ զին էր և զիմորդ և զեալ այդ նմանութիւն զլիննն ընդ զատի , սեպուք զինն ըստ կարգի ճառիցս :

Երրորդ պատճառ թերևս այն կարծիցի , զի ասացին նախնիք , որպէս սեստք , թէ զինն ոչ դատ է և ոչ լին : Եւ զհետ բերիցի , թէ ուրեմն միջն իմն է ընդ երկուսն և բարակ զատ , և ոչ նոր ինչ և երրորդ հնչուսն կէս կամ լերկ լինի : — Որ զայդ ասիցէ , պարտի խորհել թէ զմիջնն ընդ զատ և լին ինքն որով իրաւամբք 'ի զատն կոչս քարէ և առնէ բարակ զատ , և ոչ թողու լինել բարակ լին : Չի եթէ բարակ զատն միջն է ընդ զատ և լին , նշնակա սպա և բարակ լինն միջն է ընդ զատ և լին . իսկ եթէ սա նոր և երրորդ իմն , սպա և նա նոր և երրորդ իմն . եթէ չէ մեր 'ի սպառ կորուսեալ յանկարծակի զամենայն չափոց և կըչուց և համեմատութեանց գիտութիւն : Եւ որով իրաւամբք նոր և երրորդ հնչուսն ասիցէ զլերկ լինն , և ոչ զբարակ զատն որ . զի ըստ այժմուս աստիական սովորութեան՝ երկուքն ևս նոր են : Եւ որ զմեր լինն միշտ և միայն լերկ և նայ համարիցի , որպէս հակառակ կարծիցն , նմա բարակ զատն մտնանոր նորահար ձայն թուելոց է , և ոչ լերկ լինն :

Երրորդ պատճառ համարիցի թերևս ասելն նախնեաց , թէ զլիննն լինն հնչել թանձր է և անյարմար , և զատ ասելն աւեր է և չարփազոփ . և կարծիցի թէ այսու բարակ զատ հնչել պատուիրիցեն , և ոչ լերկ լին : — Այլ թէ քանի անդէպ է այդպէս յետ ընդդէմ ընթեանուլ զուղիդ դրեալն , ճուշար վերագոյն 'ի քննութեան վարդապետութեան նախնեաց , թէ զմիջն միայնոյ լերկ լին ձայնէ է բանն , և ոչ բնաւ զբարակ կոկորդաձայն զատ : Չոր և որչափ ծէքիցէ որ և խճճիցէ , չուսի զերծանել 'ի յայտնութեան օրինակացն յառաջ բերելոց ըստ հնչմանն այլոց ազգաց և գրեւոց զլիննիւ , զայլ , Ղուկաս , Ղազար , որ ոչ երբէք ոչ ուրեք ոչ յումբէ յազգաց անախ հնչեալ են բարակ դատիւ զաղ , Ղուկաս , Ղազար . այլ միշտ և միայն լայլ , Ղուկաս , Ղազար : Յուշար ևս կարծեմ բաւականապէս , թէ զինչ զանազանութիւն կայ ընդ աւեր և չարփազոփ զգատ հնչելոյն ասացեալ , և ընդ թանձր և աչարճուր զլինն հնչելոյն . որ եթէ ըստ հակառակ կարծեաց ինչ էր ասացեալ , ընդ հակառակս ամենեկն պարտ էր ասել մանաւանդ , աւեր և չարփազոփ զլինն հնչմանէն , և թանձր և աչարճուր զզատ հնչմանէն : Չի յախտեալից օրինոք բնութեան ձայնից՝ զատ որչափ և նրբեացի՝ տակաւին մաս 'ի զատ քան 'ի լինն որչափ և կամիս թաւ և թանձր և յանինթոր :

Չորրորդ պատճառս համարիցի որ ասել թէ 'ի նախնեաց գիտեմք զլինն թանձր անուանեալ , որպէս և զնշան թաւութեանն (Ի) եղեալ 'ի վերայ 'ի հին Վերականգնի . բայց լինն լերկ կամ անոր կամ կէս լինն՝ ոչ ուրեք երբէք . — Սթաւ լինն մեր մեք իսկ ինքնին առաւել ճանաչեմք քան զընդգիծմասան . իսկ զինչ այսի , ոչ իմանամք : Եթէ թաւ լիննն հին Վերականգնի՝ զբարակ զատ կոկորդային ջուշարից : Ի՛չ բաւական և առաւել քան զբաւական յուշար վերագոյնդ , թէ լերկ զհին Վերականգնի ընդ նայն գասեալ , զոր կրկնակէն թաւ լինն բազմանայ , յայտնապէս է ինդրեալն 'ի մէնջ լերկ լինն , որ և արգեամբք իսկ յետոյ փոխեալ է 'ի

զրի 'ի լ': Զխորդ զբարակ դասն կոկորդային մարթ էր փոխել 'ի լ. կամ զխորդ լիւն թաւ մարթէ նոյնանալ ընդ զաս կոկորդաւայն: Այ որ 'ի լեզու ունողաց և խոսողաց մարթէ իմանալ զայդ կամ ձևալուցանել 'ի գործարանին յաւիտեան: Գարծեալ շիմանամք, թէ որ զմեր լիւնն բոլորովն լեւրկ համարի, զխորդ կարիցէ ասել այժմ զնա թանծոր և թաւ միայն. եւ թէ զմերմէ լիւնէս ասէ, որպէս բանն պահանջէ. իսկ եթէ զուսնէն, թո՛ղ զլեւրկակն՝ որպէս ստացաք կանխաւ, ոչինչ ցուցանէ յայնժամ բանդ: Եւ զխորդ կարիցէ ասել զարծեալ, թէ առ հինն չիք բնաւ հեռք այդպիսի լեւրկ լիւնի: Եթէ չիք, ապա անդոյ է բնաւ 'ի լեզուիս այն առ և ցնորք. եթէ գոյ 'ի լեզուին, որպէս և գոյ իսկ, թէ և սակաւ ուրեք 'ի մեր բառս ըստ մեզ, իսկ ըստ հակառակ կարծեաց ամենայն ուրեք, ապա պարտի դասնել հեռք նորին առ հինն: Եւ ահա ըստ նոյնիկ ցուցնոց յայտ նապէս և զ հին Քերականին ընդ նայն գասեալ, յԱրխտակեայ քուհ և Կոնցեալ և յԵրզնկացւոյն Կէ Լիւնի, որոյ և կրկինն սոյ զթաւ լիւնն:

Եւ լ թերևս պնդիցի որ տակաւին, և ասիցէ հինգերորդ, թէ զբառին կրկին հնչումն թանծոր և բարակ՝ ունիմք 'ի կեղևանի բարբառս մերալ նեայց. իսկ զլիւնին ոչ ուրեք. զի որք թանծոր հնչէն, ոչ անօրենն զայն երբէք. և որք նրբենն և անօրենն, ոչ երբէք թանծոր հնչէն, և նեղին ևս յոյժ 'ի հնչել: Եւ կարծիցէ թէ ամենայն բնիկ հայաստանեաց այս մի միայն լեւրկ հնչումն իցէ լիւնի, և զլիւնն մեր անգամին 'ի բնէ լեւրկ և նայ:— Եւ լ ստացաք վերագոյնդ և զարծեալ ասեմք, կրկին զասի հնչումն ցնորք միայն են 'ի մեզ, ոչ ուրեք երևեալ 'ի վարդապետութիւնս նախ նեաց և ոչ 'ի բերանն ուրուք: Զի նայ զ հին Քերականին ցուցաւ յայտ նապէս զիւն կամ լիւն լինել, որոյ կրկինն սոյ մեզ զթաւ լիւն. և զի ոչ որ ոչ ուրեք հնչեալ է կամ հնչէ դոյզ, զուղիմ, զուտամ, ուղունք, Մի քայէզ, Տաղիթա, զարբերնութս կամ զամբրինթ, փիղիսոփայ, փիղոն, փիղիպոս. և որ հնչենն զայլ բառս ինչ և անուանս զափաւ, հասարակ զաս հնչեն և ոչ ինչ ընդհաս ամենին: Եւ զասին հնչումն յոյժ օտար գոյով 'ի լիւնէ, անհնար էր կորնել կամ 'ի լիւն փոխել այն՝ 'ի բերան աղչին. ուր ընդ հակառակն լեւրկ լիւն առ նուազ խորութեանն 'ի թաւէն՝ զիւրաւ մարթէր խառնել ընդ նա և կորնել:

Իսկ գալով այժմ առ ինդիւն, թէ աղգային լիւնն մեր իցէ 'ի բնէ լեւրկ և նայ, և ոչ թանծոր, ասեմ: Ընդդէմ է այդ յայտնի աւանդից հին Քերականին, որ զլիւնն մեր ընդ թաւ ստանն կարգէ՝ զթաւ նշանն ևս եւ դեալ 'ի վերայ. որ ոչ 'ի հելլէնականն առեալ է, և ոչ հելլէնականն լամբոյայէն է, որպէս հարկի ասել և ասէ իսկ հակառակ կարծիքն. այլ բնիկ հայկականն: Վասն զի 'ի յոյն բնագրին չիք անդ լամբոս, որ նայ և լեւրկ առ և ըստ վկայելոյ ամենայն քերականաց նոցա և հնչման աղչին: Եւ զի նոյն հին Քերականն, խառնելով և յայտ 'ի բնագրէն, ոչ միայն ընդ նայնն չիք զլիւնն մեր, այլ և յայննապէս կրկնակ զնա ասէ՝ յերկուց նոյ զից բաղկացեալ. որով անհնար է նմա լեւրկ լինել. իսկ լամբոս ոչ երբէք ուրեք ասի կամ կարծի կրկնակ գոյ: Եւ զի Արխտակէս Գրիչ ասէ, զիլիւնն լիւն ասել թանծոր է և յախնթոր և անյարմար որով յայտ է թէ զբուշացուցանէ չհնչել իրրև զլիւնն մեր աղգային՝ որ սովորական էր 'ի բերան աղչին. և ոչ թէ զայլոյ ուրուք աղչի լիւնէ խախտ առ աղչն: Կա ասէ իսկ յայննապէս համոձայն աւանդից հին Քերականին, թէ յերեսեանն աղչան նօսր է լիւնն, իսկ 'ի մերս թանծոր. և Երզնկացին թէ է լիւնն թանծոր:

Ընդդէմ երանէ այժմ նոր կարծեաց և հասարակաց սովորութիւնն աղգային, որ յանթիւ բառս և դրեթէ սովորաբար թաւ հնչէ զլիւն. իսկ լեւրկ հնչումն 'ի սակաւ բառս ինչ լսի այժմ, և այն առ սակաւս ոմանս, կամ գաւառի կամ անձին առանձին յատուութեամբ. որպէս է առ ոմանս Կուլայ, և այլն: Բայց սակայն ահա այդ իսկ նշան է, թէ գոյր և գոյ ու

րիմն յազգին կրկին հնչումն տառիդ . և չէ ինչ ընդդէմ, թէ զոր 'ի հնուսն յայլ բառս ինչ հնչէին, այժմեք ոմանք յայլ բառս հնչիցեն : Բայց ոչ մասնաւորաց ոմանց և մասնաւոր ժամանակի հնչմունք ինդրելի են մեզ, այլ հասարակաց կամ բարոց, և հին նախնեաց զբաւորակն օրէնք, որոց որոց ընդհանրապէս լինեն մեր թաւ է խկրայնէ և այս 'ի բերան ամենայն հայաստանեայց : Որպէս մէք իսկ ինքնին հաւատեցաք զայս կրկին և կրկին յարարբերութենէ բազում հայկազնեայց գաւառաց գաւառաց մերոյ բնիկ աշխարհին . և տեսաք զի առ հասարակ թաւ հնչէին ըզլին մեր և զտաճկաց թանձրն . նա և զնոյն իսկ իւր՝ լաճ, իւր՝ լաճ բառն բաւորեմք թանձր հնչէին . որպէս և Երզնկացւոյն օրինակ զոչոյն բառք ածելն զկայէ : Այս մտացածին ցնորք է կրկին զասն, և թիւր՝ կարծիքն բնաւ լերկ գորոյ լինին մերոյ :

Այլ հակառակ կարծիքն թերևս տակաւին ճգնել կարծիցէ զմեր կողմն ասելով վեցերորդ . թէ տեսնեմք բազում բառս յօտարաց 'ի մեզ և 'ի մենք առ օտարս անցեալ, որք առանց զփշիկն 'ի վերայ ունելոյ՝ զառ ունին 'ի մեզ և լին ևս օտարս . որպէս ալ, աղաղակ, մեքր, մանդաղ, մաղաղած, ասող, և այլն : Եւ ոչ է մարթ ասել թէ Հայք 'ի հնուսն առ ասէին և աւելի, մել, մակաւ, մագաւ, աւել, և այժմ և ոչ մի որ 'ի Հայոց հնչիցէ և գրիցէ այնպէս : — Չայդ ընդունիմք և մէք . բայց ասեմք, յայնժամ զորէր այդ ընդդէմ մեր, եթէ ասէաք մէք թէ չգոյր բնաւ զառ առ հինսն մեր, և թէ զյատուկ աղաղային բառս մեր, որ միշտ 'ի գիր և 'ի խօսս զատիւ են առ մեզ և նմանքն երկին առ այլս լինիւ, զնոսս ևս 'ի լին փոխելի իցէ : Չայդ և ոչ ընդ միտ անդամ ածեմք : Եւ ոչ իսկ սարս համարիմք քննել թէ յորմէ աղգէ յոր անցեալ իցեն բարք, կամ ուսով իցէ այդ գրիւրած կամ նմանութիւն լինի և զատի : Հնար է, որպէս հաւանեալու եմք, թէ 'ի յախուսն թիւր լայ անցեալ իցեն 'ի միջ 'ի միւս անգ, ոչ միայն 'ի գոսա, այլ և յայլ ևս տառ՝ օտարոսի հնչումն 'ի բառս ինչ ևեթ աղագ առարաց . ԅունաց, եբրայեցաց, Պարսից և բաղկացաց . որպէս և եղեալ իսկ գտանի արդեամբք և հասարարմոյցեալ առ լեզուաբէտան, և որպէս է իսկ ցայժմ սովորութիւն լինելոյ : Եւ այսպէս ապա սամակահանն այն աղաղային հնչումն հաստատեալ յոյսմ կամ յայնմ ազգի, և այնուհետև փոխելն և ուղղել անկարելի և անտեղի իսկ : Այս է և ասելն Արիստակեսոյ, թէ զատք լծորդ է լինիդ . զոր և խառնակութիւն մանաւանդ ասելի է քան լծորդութիւն :

Այդ ոչ միայն առ այսուք ազգօք երևի 'ի լեզուի մերում, այլ և 'ի մեր իսկ բառս . զոր օրինակ, սրպէս լի եղեալ է յղի, արն անաղի (անի), գիդ, գիլ, գայթաղդէմ, թոյղ, թոյլ, թոլ, թողում : Այսքերիկ անհասից ինչ գիրք են՝ թարգմանաբէ 'ի մաայլ գաղտնութեան ծագման, կաղմութեան և փոփոխման լեզուաց, և շմարթեն լինել մեզ 'ի կանոն տառադարձութեան :

Եթէ հասարակ անուանց ինչ առ այլս լինիւ լինել իսկ առ մեզ զասիւ, կարծիքն ցուցանել ինչ ընդդէմ մեզ, ոչ ապաքէն ընդդէմ հակառակ կարծեացն ցուցանիցեն բազում բառք՝ որ առ այլս և առ մեզ լինիւ են, զորս և դիւրին է լեզուաբիտաց գտանել և տեսնել . դիցուք քանի մի ևեթ առ օրինակէ . այլ, άλλος, alius . այլ, άλλα . ալ կամ ալի, ալի, ալեւ, ալեւր կամ ալեւր, αλευρον . բոլոր, ὅλος, πόλος . դիւմ, κλίνο, κύλιω . ամբեմ, λαβή, λαμβάνω . լաւ, λώϊον կամ λώϊον . լի, վեր, λείος, πληρης . լիալի, lectica . լոյս, lux, լոյտ, λουδορία . կրանեմ, glutio . հալուէ, αλώη, եբր . աշալ . հոյք կամ հոյք . ὄλοι . բալ, սրսի, սալու . թել, աճ . թէլ . իլ, իլիկ . լեզու, արաբ . լիսան, γλώσσα . լեզում, լիզում, լէս էթմք, λείγω . լիճ, լիկ, արաբ . լիճճ՝, λάκκος, lacus . ուլ, աճ . ուլաք . շիլ, դերման . շիլ, և այլն, և այլն : Կայ և ընդ հակառակն՝ այլոց նուրբ զասն 'ի մեզ լինի, որպէս γίνομαι, լինիմ : Այլ որպէս այդ և այդպիսիք ոչ լինին մեզ յօրէնս տառադարձութեան, նոյնպէս և ոչ զայլոց լինին 'ի զառ յեղոյ : Կհատեղի է



ևս՝ զի այդ չփոխժամն զատի 'ի բառս ինչ, առ կարի հինն մայն երևի. իսկ առ միջինս և յեախնս մեր և այլոց, թէ գրուածն գրեթէ առհասարակ՝ և թէ հնչումն յօտարազգի բառս՝ լինէ է. զոր օրինակ զԼԷ, ԲԼԷ, զԾՏԱԷ, լական կամ՝ լեկան, դաշապը, մոլոշ, և այլն: Իսկարգ մեր բանքս են զբառոց օտարաց՝ որ նոցա բնիկ են, իսկ 'ի մեզ յայննապես հիւրք. և մանաւանդ զյատուկ անուանց, և այն՝ ոչ զօմանց և զասկառուց ևեթ, այլ հասարակ օրինոք 'ի նախնեաց անտի 'ի զ փոխելոց, մանաւանդ թէ ասել՝ զատանման գրելոց, և այսօր անհմտաբար զատ եղելոց 'ի գիր և 'ի ձայն. թէպէտ և այդ իսկ ոչ միօրինակ: Զի չգիտեմք որով իրաւամբք 'ի դոսա զլին օտարաց՝ զատ առնեմք. որով իրաւամբք զօմանս զատ՝ զօմանս լինէ. և որով իրաւամբք չառնելիք նոյնպէս զատ և յանուանս այժմու աղբաց, և չափեմք Ղափնոնայն, Գիղզ, Ղապղակ, Մոզեր կամ Մոյիէր, Գիւեր, Կոտզ, Սթիգեգեղ: Եթէ սքս ծաղրելիք են յաչս աղբայն այնոցիկ և անխմանալիք, ոչ նոյնպէս իցէ և Հրէին աղէղութի, Ղամբք. Յունին՝ Հեղդէն, Մենեղառս, Կաղնսպէ, Պաղեոզոգ. հռոմէացեացն՝ պաղասն, Գուգուզոս. Սիլզս:

Բայց թերևս ոչինչ զարմանք թռակոցի հակառակ կարծեաց՝ թէ լերի լինն կամ որ և է լինն այլոց աղբաց 'ի մեզ յօտարտի ձայն զատին կամու փոխեալ իցէ. այսմ հաստատութիւն կարծելով զայն՝ զի զայլ են տառս այլոց աղբաց այլափոխեալ իցեն մերն նախնիք. այնու զի եղեալ են օրինակ ինն փ առ Փ Ֆ ձայնն նոցա, յ առ ՚ի կամ եօթա ձայնն: — Ելլ նախ ոչինչ է ամենին օրինակի. զի նախնիքն յամենայնի այնչափ ևեթ զնմանագոյն տառս մեր եղին 'ի տառագարձութեան հանդէպ տառիցն օտարաց, որչափ մարթէրն և տանէր լեզուն: Արդ Փ Ֆ ձայն չիք ամենին 'ի բարբառս մեր. զոր և ցոյսը 'ի խորին Հայս մարթեն արտաբերել: Զինչ կարէին առնել նախնիքն, բայց զօտարոյնն 'ի մերոցս գնել առ այն, որ է փ մեր: Ասա դու Յունին հնչել ժ կամ շ, յալխեան հնչեացէ քեզ զ և սինդրեա հ, լուիցես խ. պահանջեա ծ, նա տայէ քեզ միշտ ս, և զԵռս. մեծ կամ զԵռս մեծ հայկական՝ արասցէ Եϋμης, Հերմս. որ և Τριμέγεστος: Եանկարեկն զինչ առնել իցէ: Իսկ 'ի լեզուի մերում գոյր լին ձայն՝ թէ թառ, թէ լերի, և ընդէր էր թողուլ զայն, և զնել զատ՝ ձայն օտար առննին և անհամեմատ: Երկրորդ, եթէ 'ի տառս ինչ փոքր մի օտարութիւն երևի այժմ 'ի մեջ երկուց աղբացս՝ Յունաց և Հայոցս, այն՝ որպէս բարեք ասի 'ի Բազմավիպի անդ՝ յառաջ եկեալ է յայլոցելոց հրնչմանց նոցա և մեր յայնչափ դարս. նոյնպէս և հռոմէացեացն, զորոց զփորձն անձամբ պատասհեալ առաք 'ի կողմանս հնոցն լատինին, ուր գեղջէքն զԵ հնչէին բ, զԸ՝ գ, զԹ՝ դ, զՂ՝ զ, զՂ՝ ս. որ որպէս յայննի երևի՝ է տառագարձութիւնն նախնեաց կռուեալ հանդէպ յունական նայն, որոց համեմատին լատինականքն: Բայց ճշգրիք խօսելով. ըստ այժմու իսկ արտաբերութեան երկոցուց աղբացս՝ Յունաց և մեր, չկայ բնուրինց այլալուծութիւն կամ անհամեմատութիւն տառիցս: Զի որ փոքր մի օտարոցս եւն համարին տառք, β բ, γ գ, δ դ, x հ, π պ, τ տ, սակաւն ցայսօր և նմանագոյնքն են 'ի տառիցս մերոց, որ կարիցեն կռալ ձայնդէպ յունականայն. մանաւանդ 'ի նկատելն զնոսին յայլ և այլ գիրս և դէպս նոցին՝ ընդ այլ տառան իւրեանց, և 'ի համեմատելն ընդ տառս այլոց և աղբաց, զորմէ չէ սեղուցս երկարել: Եւ այսօր իսկ ոչ դք յողիղ և քաղ հայագիտաց և յունագիտաց կարասցէ բնու զայլ ինչ գտանել յարմարագոյն քան զեղեալսն 'ի նախնեաց: Չայն տամք առ ամենեանս, եթէ կարողացի որ առնել զայդ: — Այսպէս է և յ առ ՚ի կամ եօթա յունական: Մի՛ զի և 'ի մեզ բազում ուրեք ձայն ինոյ ունի տառք, որպէս 'ի այն, հայր, քոյր, լոյս, և այլն: Եւ երկրորդ, զի չգիտեմք հաւաստի՛ որպէս հնչէր տառք 'ի հնումն 'ի սկիզբն բառից, որպէս և անուանեցն Յայրոս, Յիսուս, Յովակիմ, և այլն:



Իսկ յայլ բառս ինչ կամ յանուանս թէ գտանի մեծ օտարութիւն տաւելց հեռաւոր ընդդատառութեամբ, որպէս ՚ի Սաւուր, Էւառոզ, Միւմնոն, Էմաւոն - Տիւրոս, Ծուր - Միդոն, Ծայգան, այդորիկ ոչ տառադարձութեամբ յունիկն եղեալք են, այլ ըստ երբայական կամ ասորի հինչման, կամ ըստ սխալ աղբային լոյս և հնչման, որ ընկալեալքն էին երբեմն յազգին: Եւ ոչ ինիկն օրինակ կանոնաւոր հարազատ և միօրինակ տառադարձութեան գրագիտոց՝ յանուանս որք վարդեմի աղբային արտաբերութեամբ չեն այրափոխեալ ՚ի մեզ: Ազգս թէ ոչ, ահա և Գիրգինէն ըստ գաղղիական հնչման ոմանց յետին գարուց՝ եղեալ է Գիոթէն, Մադիսարոսն՝ Մաժիառ, Պորփիւրոզէնն՝ Պերփեռուժէն: Եւ ո՞ յայդցանէ ՚ի վերայ բերիցէ, թէ սեն շայ է կամ ծայ, տիւնն՝ ծայ, գինն՝ ժէ, ին՝ այ, ան՝ եչ. կամ թէ էջ այդպիսի անխարութեամբ վարեցեալ են մեր նախնիքն ՚ի գրաւոր լեզուի իւրեանց:

Ազգս, որպէս տեսաւ, այդ ամենայն կարծեալ բանք ոչ կարեն տապալել զչինուածն մեր ՚ի վերայ այնչափ հաստատուն հիմանց կառուցեալ:

Մնան երկու առարկուածք օրինաւոր որ ընդգէմ թուի մերում վարդապետութեանս. զորս և տեսցուք այժմ անաշտապէս:

Առաջին այն, զի թէ զինն ինչն էր, և վասն այնորիկ իսկ ապագայ դրեք փոխեցին զայն ՚ի ինչն. ընդէր ոչ զամենայն նոյնպիսի զինն փոխեցին ՚ի ինչն: Եւ ընդէր աղագ ոչ հնչէ զայնս լերկ ինչնիւ: Չի ոչ ուրիւք գտանի գրեալ օրինակ ինչ Լուկաս, Լազար, Լուսնիանոս, Բագեգեայք, Բարսեւէ, Պաւլոս, Կիւրոս. և ոչ որ զայդոսիկ ինչնիւ ասէ, այլ յատեւ:

